

Ե Ե Գ Ե Զ



5

(188)
Մայիս, 2022

«ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ» մրցանակաբաշխություն-2022



Մայիսի 1-ը բանաստեղծ ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ ծննդյան օրն է: Այս տարի նա կրանար վաթսուհինգ տարեկան: Այդ օրը Արարատ Մկրտումյանի ծննդավայր Ալավերդիում նրա շիրիմի մոտ հավաքվել էին շիրակցի և լոռեցի գրողները, բանաստեղծի եղբայր՝ «Արարատ Մկրտումյան» հիմնադրամի նախագահ Արթուր Մկրտումյանը, հարազատները: Նրանք հարգանքի տուրք մատուցեցին բանաստեղծի հիշատակին. ծաղիկներ խոնարհեցին նրա հուշաքարին:

Այնուհետ թափորն ուղևորվեց Ալավերդու Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցին, որտեղ հավաքվել էին շատ գրողներ, մտավորականներ, հյուրեր մայրաքաղաքից և այլ բնակավայրերից: Մա-


տուցվեց հիշատակի պատարագ՝ նվիրված Արարատ Մկրտումյանին: Ապա Ալավերդու մշակույթի տանը տեղի ունեցան տաղանդավոր բանաստեղծին նվիրված հուշ-ցերեկույթ և «Արարատ Մկրտումյան» հիմնադրամի սահմանած ամենամյա հանրապետական երիտասարդական գրական մրցանակաբաշխության 2022թ. արդյունքների ամփոփումը:

Մրցանակը՝ Արարատ Մկրտումյանի դիմապատկերով հուշամեդալ և մրցանակ շահած գրքի տպագրություն, սահմանվել է բանաստեղծի եղբոր՝ Արթուր Մկրտումյանի նախածեռնությամբ՝ ի շահ հայ գրականության զարգացման:

2022 թվականի մրցանակաբաշխությանը մասնակցել են Լո-

ռու մարզում ապրող երիտասարդ ստեղծագործողները: Գլխավոր մրցանակին արժանացավ Լիլիթը՝ «Հիգիենիկ երազներ» ժողովածուի համար, իսկ խրախուսական մրցանակի արժանացան 6 հեղինակներ՝ Անի Ղազարյանը, Մարինկա Ռաֆայելյանը, Վիլյետա Լապտևան, Իրմա Հակոբյանը, Հրաչուհի Լոռեցյանը և Նարե Վարդումյանը, որոնց ստեղծագործությունները տպագրվել են «Հոգեթևուններ» խորագրով ամթղոգիայում:

Շնորհակալություն «Արարատ Մկրտումյան» հիմնադրամի հովանավոր Արթուր Մկրտումյանին: Նույն ՆԻԿՈՂՈՍՅԱՆ



ԷՂՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

Մայիստասյան այս սրտխփոցների մեջ կենարար արևի ջրմուռնուն կա, բացվող ծաղկաթերթերի շնկշնկոց և եղվարդ Միլիտոնյանի ծնունդն ազդարարող ավետիս: Շնորհավոր Ձեր ծնունդը, սիրելի՛ պոետ...

ԱՌԱՋԻՆ ՕՐ

Աղջիկը գալիս էր թիթեռների հագած,
Աղջիկը գալիս էր ծաղիկների հագած,
Աղջիկը գալիս էր թռչունների հագած:

Ես այնպես ամուր գրկեցի նրան,
Որ թիթեռները բացատներ իջան,
Որ ծաղիկները թռան հովիտներ,
Եվ թռչունները մեզ տարան Իրենց թևերի վրա:

Աղջիկը մերկ էր,
Եվ նրա լույսերից մահն էր կծկվել
Իմ կոպերի տակ:

ՄԵՐ ԱՉՔԵՐԸ

Մենք փակ աչքերով իրար սիրեցինք
Ու շփոթված լույս կար մեր ձեռքերում,
Եվ ապրում էինք ծովի ջրերի, Ծաղիկների մեջ ու հասկերում:
Անցնում էր օրը ու մեր ձեռքերում Քնում էր ձուկը փայլուն ու անփույթ,
Նրան օրոր էին սրտերը ասում,
Նրա երազը թեթև էր ու լուրթ:
Բայց շնածուկը եկավ հեռվից
Եվ տարավ ձուկը փայլուն ու անփույթ,
Եվ մեր աչքերը բացվեցին ցավից,
Ինչը սև էին, իսկ քոնը՝ կապույտ:

ՄԱՅՐԱՍՈՒՄ

Ու մի պահ կա մայրամուտի,
Երբ երգերը շուրթերն իրենց
Բացուխուսի են անում անվերջ,
Բայց համըր են մնում դարձյալ:

Երբ փայլերն են խամրում դանդաղ,
Եվ քո անունն են մոռանում,
Եվ ուզում են հավել օդում,
Եվ ուզում են ձուլվել պատին,
Եվ չես ուզում մի քայլ անել:

Ու մի պահ է մայրամուտի,
Երբ ծառը՝ ծառ, խոտը խոտ է,
Երբ թիթեռը ջուրակի հետ
Խաղաղ ափերն է ընթանում:

Երբ կոպերը ծանր են ու տաք,
Եվ ոտքերը՝ ամպերի պես,
Ու երբ սիրտդ կողոսկրերիդ վախով հպած
Ձանգակների հեռու-հեռու ձայնն է լսում:

Եվ մի պահ կա մայրամուտի,
Երբ գգում են,
Որ երբ սերը լքում է քեզ,
Դու ուզում են դառնալ խխունջ

Եվ կողերիդ մեջ ամփոփել
Արձագանքը մեռած սիրո:

Աղջիկ, ինչ կլինի
Արի ու դարձիր իմ երգը:
Դու կթափառես դաշտերի մեջ բաց
Ու ամպերից մաքուր
Չյուն կբաղես:
Աղջիկ, ինչ կլինի
Արի ու դարձիր իմ երգը:
Երբ չլինեն հետո,
Մի՛ վախեցիր, աղջիկ,
մի՛ վախեցիր:
Քեզ կբոլորեն
Դաշտի քամին, հովը,
Չեն թողնի ոչ ոք
Հավիլ քո ձեռքերին,
Քո մազերին,
Ու կօրորեն քեզ:
Աղջիկ, ինչ կլինի
Արի ու դարձիր իմ երգը
ու պահիր աչքերիդ մեջ աչքերս,
Ու նրանց խորքում միշտ թող փայլի
Արցունքն ուրախության:

ՉԵՐ ՏՈՒՆԸ

Չեր տունը
Հեքիաթներով ու աստղերով
լցված
Ցորենի հատիկ է:
Դու կանգնած ես շեմին
Ես բարի գիշեր եմ ասում կամաց:
Վաղը նոր օր է:
Մաշկիս տակ ցերեկ է բացվում,
Ծառերին՝ նարգիզ:
Ես առյուծ եմ ճերմակ՝
Թիթեռնիկներ բաշխս:

ՄԵՎ ԱՉՔԵՐ

Սև աչքերի սև ծաղիկներ,
Չեր ցողն ո՞վ է խմելու,
Չեր նեկտարի ահեղ բույրից
Ո՞ր մեղուն է հարբելու:
Սև աչքերի սև անձրևներ,
Ո՞ւմ եք արդյոք որոնում,

Չեր թելերի սարդոստայնով
Ի՞նչ հոգի եք հմայում:
Գիշերվա մեջ ցավը խորն է,
Կարմիր վարդ է չարչարված,
Նա իր փշե ասեղներով
Խոցում է իր վերքը բաց:
Սև աչքերի սև զանգակներ,
Ո՞ւմ կորուստն եք տարածում,
Ով էլ ընկնի ձեր գարկերից՝
Կհառնի ձեր տաճարում:

ՍԵՐԸ

Սերն այնքան խորն է,
Որ խեղդվում ենք նրա ծովում:
Սերն այնքան անապատ է,
Որ վառվում ենք նրա
ավազներում:
Սերն այնքան երկինք է,
Որ ճախրում ենք նրա եթերում:
Սերն այնքան հեռու է,
Որ երազի ճեպընթացով ենք
միայն նրան հասնում:

ԿՆՈՋ ԳԱՂՏՆԻՔԸ

Կնոջ գաղտնիքն ուժ է առնում
Գիշերվա սև մարգարիտից:
Նրա մարմինն ալիք-ալիք
Միանում է անասպառիին:
Խմիր դյուրեփչ փայլը գնդուխտ
Փակ աչքերի ու լռության:
Քեզ կգտնես ինքնամոռաց
Մեծ խեցու մեջ կախարդածայն:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔ

Ես կանգնած եմ քո դեմ,
Գիշերային քաղաք:
Գիշերային քաղաք,
Քո աղջիկը չար է, ինչպես գիշեր,
Քո աղջիկը չար է, ինչպես քաղաք,
Քո աղջիկը չար է, ինչպես աղջիկ:

ՍԵՐԵՐԸ

Սերեր, հիմա հիմ շորի պես
Կախվել եք այս պահարանում,
Լավ է, ցեցը դեռ չի կերել

Հիշողության իմ ընտրանուն:

Աղջիկ էիք, հիմա՝ տիկին,
Զվարթ էիք, հիմա՝ ուրիշ,
Ո՞նց էի ես գծվում գինուց,
Դուք գիտեիք, թե ես եմ գիծ:

ԱԳՈՎՎԱՔԱՐ

Մարութա սարի գագաթին
կանգնած այս էլ քանի դար
Չենով Օհանը, Քեռի Թորոսը,
Նաև այն խեղճ պառավը, անգամ
խանութի խաթունը
Քառածայն երգչախմբի հանգով
գոռում են,
Գոչում, ճչում են, պաղատում՝
Դուրս արի, Փոքր Միեր, դուրս
արի Ազալաքարից,
Դուրս արի, բալա, ախր պաղ
քարանձավում
Էլ հողացավ, էլ ռադիկուլիտ, էլ
չգիտեմ ինչ կվաստակես:
Քարը փեշիցը թափի,
դուրս արի, բալա,
Մեկ է, ոչ ցորենը քանց մասուր
կղանա, ոչ էլ մասուրը՝ ցորեն:
Դառնանք ասենք, որ նրանց
միացավ էդգար Պոյի ազալը,
Դառնանք ասենք ապա, որ
նրանց ծայանակցեց
Նույնիսկ մի հասարակ քար:
Մասունցու կողով այս Փոքր
Միերը իր էջն է քշում:
Այդ ընթացքում Ազալաքարը
դանդաղ, ծանր բարձրանում է
Լեռը,
Ապա թավալվոր՝ մինչև Լեռան
ստորոտ:
Ել ու վար,
Վար ու ել:
Այս էլ քանի դար:

Մեզ մնում է արձանագրել՝
Փոքր Միերը մեր Սիզիփոսն է,
Բայց Ազալաքարի ներսում:
Ազալի պես վեր է ելնում:
Քարի պես գլորվում է վար:



թարթում է աչքն հիշողության, քառուսում այս ո՞վ է արդար, ո՞վ մեղապարտ, ճանապարհը դուրս մղվելով անցուդարձից հարազատ տան, փաթաթվում է ծառաբնին հանց մեղվապարս:

Երկվորյունն էլ թեմա է, որ փոխարկվում է մուսայի կաթիլներին: Հարկավ: Կարողանո՞ւմ ենք գրուցել ես ու իմ եղբ և ի՞նչ ենք ասում միմյանց... Նախ փորձում ենք վերականգնել կորցրածը հիշողությամբ և բանաստեղծությամբ: Ինչքանո՞վ է դա ինձ հաջողվում չզգիտեմ, իսկ նրա՞ն... Անչափ խոր անձավներով է անցնում իմ ներշնչանքը, երբեմն այնպես է թվում, կարծես տողը բաց երակ է: Մերթ ասելիքի մեջ են փնտրում ինձ, մերթ նրանից դուրս: Եվ զարմանալին այն է, որ արտահայտվելով ոչ թե սպառվում են, այլ լցվում ու ամբողջանում: Բայց շարունակում է մեջ տրոփել իմ երկվորյունը: Կիսված են զգում ինձ և արյունոտ, ինչպես իմ երկիրը: «Ցավ կա, որ չի տեղավորվում ներսում բառի»: Գնում են դեպի ոգու խորքը՝ անուններ տալու այն երևույթներին, որ ինձ անձանք են: Անցնում են «Ցավի սահմանը» բանաստեղծությունների շարքի միջով և մոտենում «Հորիզոնի փետուր»-ին, որտեղ ընդգրկվել են 505 բառային: Ահա այսպես շարունակում են գրուցել ինձ հետ, և իմ դիմաց բացվում է հոգևոր հորիզոնը: Ամեն թեմա նվաճվում է ամբողջի պես, գաղտնադուռը բառն է, լռության երակներով հոսող ավյուր... Կանգնում են իմ դիմաց, բացվում Քիրսի շնչառությամբ:

ՄԻՄՅԱՆՑ ԶՈՐԱՅՆՈՂ ՈՒԺԸ

Նվարդ Ալեքսանյանի հարցազրույցը շուշեցի բանաստեղծ Ռոբերտ Եսայանի հետ

Նվարդ Ալեքսանյան -Բարև, Ռոբերտ, պատերազմի դաժան պարտադրանքով ընտանիքի հանգրվանել է Գյումրիում: Զարեհի հանգով ասենք՝ թողած Շուշիի տունը... Ինչպե՞ս եք...

Ռոբերտ Եսայան -Եթե Շուշիում չես, պիտի լինես Գյումրիում: Իսկ իմ բացակայությունը Շուշիում զգում են քարը, ծառը, ճանապարհը և օդը: Առօրյայի միտքից արթնացող բնույթ ունի Շուշիի օդը: Քրքրում է մարդու հոգին, սրտի խորքից վերհանելով շողերը միաձուլում ճանապարհի հեքին: Եվ այդ հեքը բարձունքային մտածողությունն է, աղոթքը, որ այնքան մոտ է երկնքին. «Ճակատագրի երկու ափերի միջով // իմ գետն է հոսում»:

Նույն հոգևոր շնչառությունն է Գյումրիում և Շուշիում: Դա է պատճառը, որ ինձ մենակ չեմ զգում գրողների և արվեստի նվիրյալների շրջապատում: Հիմա ես կարողանում եմ սպասել տողի ծնունդին: «Ձրերս կխուսափե՞մ արդյոք համբույրից //անդունդի...»:

Ն. Ա.-Մարդուն պատուհասած աղետները առավել դժվարացնում են սեփական ես-ի հետ առերեսումը: Կարողանո՞ւմ եք գրուցել, ի՞նչ եք ասում իրար...

Ռ. Ե.-Կյանքը շարունակվում է: Շարունակվում է և սեփական ես-ի հետ առերեսումը. «Հիշողության սահմաններից մինչև դարպասն ապագայի// գերակա է երազի պես անհայտ մի կյանք...»: Անհայտ կյանքը գրավիչ է, եթե դիմավորում է քեզ երազի պես:

Լռությունը նայում խորքից,

Արքայական գոյությունը Ձինված ուժերով և Մշակույթի հարատևող կրակով: Ահա՛ Հայի լինելության բանաձևը:

Ն.Ա.-Այս դժվարին ժամանակները կենսական խնդիրների լուծման հրատապությամբ են սեղմվում մեր շուրջը: Իսկ մենք կարծում էինք, թե մեր պայքարի ժամանակն անսահմանությամբ է չափվում:

Ռ.Ե.-Հայի համար ժամանակները ե՞րբ են բարի եղել: Կենսական խնդիրների լուծման հրատապությամբ սեղմվում է ոչ միայն երկիրը, այլև՝ ընտանիք պահող անհատը: Անցած տասնամյակներում ավելի դժվար իրավիճակներ ենք հաղթահարել: Արցախյան առաջին պատերազմում հայ ժողովուրդը հաղթեց հետերկրաշարժյան դժվարությունների առկայությամբ, թշնամուց առգրաված զենքով: Մեր աննկուն ոգին չկոտրվեց անգամ հետխորհրդային տնտեսական կառույցների փլուզումով: Պատրաստ էինք ամեն փորձության, միայն թե ազատագրվի ու փրկվի Արցախը՝ պատմական Հայաստանի 10-րդ նահանգը: Հայ ազատագրական մարտի շարժման շրջայի առաջին ոսկե օղակը...

Ն. Ա.-Ապրում ես Գյումրիում, Շուշիում կորցրել ես տուն-տեղ... Ի՞նչ ես տարել քեզ հետ, որն անկայման հետ ես բերելու...

Ռ. Ե.-Կորցրել եմ ոչ միայն տուն-տեղ, այլև Հայրենիքս մի մասը:

Աստծո գծած սահմանագիծն արյունից չես տարանջատի, ե՞րբ ես ապրել պատրանքների արծաթափայլ տարածությանը:

Համբուրում ես մի բուռ հողը, որպես ճակատն հարազատի, ընդլայնելով Հայրենիքը լապտերներով հիշողության:

Ես ինձ հետ տարել եմ իմ քնարն ու երգը. ուրիշ հարստություն չունեմ: Այնտեղ, որտեղ ապրում եմ, Գյումրիի է- ներշնչանքների շիկացման կենտրոնը: Աստղերի լույսով սնուցվող հողում բնական է, որ պիտի բացվեր իմ քնարը՝ մի նոր շնչառությամբ և հուզալարերի ուժգնությամբ: Ես անկայման ինձ հետ Արցախ կբերեմ իմ երգ ու քնարի Նոր այգաբացը. «Ճանապարհը իր աչքերն է փնտրում Վերածնության սուրբ լեռան վրա, //գտնում է հոգին անսահմանության և հիշողության բաբախյունը թանկ»: Ես իմ ճանապարհն եմ:

Ն. Ա.-Տես, ինձ թվում է մեր ազգային-ազատագրական շարժման ոգին մեզինք հեռացել է, բայց ինքնապաշտպանական հզոր ազդակով շարունակում ենք մեր քայլը՝ միմյանց զորացնող ակունք վերադառնալու հույսով: Համամի՞տ ես...

Ռ. Ե.-Այո՛, իհարկե: Միմյանց զորացնող ուժը Հայոց լեզուն է, Մեսրոպյան գիրը, որ սրբագործում է սերունդների ճանապարհը Առաքելական եկեղեցու զանգերի դողանքներով, հաստատում մեր

Ն. Ա.-Ռոբան էլ զարմանալի, իմ կարծիքով, մարդուն պատու-

հասած ահասարուռ աղետների բերած դժվարագույն հարցերն ունեն շատ պարզ պատասխաններ՝ թերևս մարդուն հասանելի, բայց հաճախ նրանից անտեսված: Ո՞րն է քո գտած պատասխանը:

Ռ. Ե.-Ցավոք սրտի, աղետից հետո մեր ճանապարհին այլևս պես ցցվում են ոչ միայն հարցերը, այլև նրանց պատասխանները: Մի բանում վերջերս համոզվել եմ, նույնը և (առանց հուշելու) վկայեց նաև բանաստեղծ ընկերս՝ Անդրանիկ Կարապետյանը. հայ ազգին այսօր հուզող բոլոր հարցերի պատասխանները գտնվում են մեր բանաստեղծություններում: Այսինքն՝ մենք դառնում ենք «ժամանակի շո՞ւնչը»:

Անիվները բաժանո՞ւմ, թե՞ միացնում են երազները ճանապարհի, ապաշխարհանք բառը հատում սահմանագիծն, արարում է հոգու խորան, ի՞նչ խորհուրդ է քարը առնում, որ աղոթքը փոխարկվում է սուրբ խաչքարի, ի սկզբանե ներշնչանքն ու լռությունը արյան մեջ են երգում խորալ:

Ն. Ա.-Մարդն իր ողջ կյանքում փորձում է ճանաչել ինքն իրեն, մեկնել իր աշխարհ գալու Տրիտուր խորհուրդը: Աղետներով անցածի իմաստությամբ կարողացե՞լ ես պարզել թե ով է Ռոբերտ Եսայանը:

Ռ. Ե.-Մարդն ապրում է ճանաչելով և իմաստավորելով իր կյանքը: Նա չի հասնում ոչ ճանաչողության սահմանին, ոչ էլ իմաստավորման վերջին շերտին: Անընդհատ բացում է և բացահայտում իր ճանապարհի խորհուրդը: Այս առումով՝ ես էլ ընթացքի մեջ եմ, գնում եմ դեպի Անհասը, որը ճանաչողության և կյանքի իմաստավորման գագաթն է, կոչվում է Անհուն կամ էլ Անդին: Ո՞վ է Ռոբերտ Եսայանը՝ հարցին կարող է պատասխանել միայն իմ ճանապարհը: «Հիշողությունը ցավում արթնացող դողանք է և լույս, // անհայտ աշխարհի շեն մ է այս բառը, կրակը ոգու, //աղոթքով բացվող աչքեր են գուցե ներսը և դուրսը, //վերածնվում ենք ու ամբողջանում երազի խորքում»:

Ն. Ա.-Մենք հիմա ո՞ր ժամանակում ենք, ես ճիշտն ասած, դժվարանում են կողմնորոշվել...

Ռ. Ե.-Մենք հիմա ապրում ենք փորձությունների ժամանակում: Եվ ամեն օր ու ամեն վայրկյան վերադառնում ենք միմյանց զորացնող ակունքը: Ապրում ենք՝ համառության քարերին էպոսներ

գրելու հավատով ու հույսով: Իսկ մեր դիմաց՝

Խոլ հուշերը ձիերի պես ծառս են լինում ամեն կողմից, մրրկասյուն հիշատակի ավետիսն է հերոսների. ավազներից դուրս է ելնում մարտաշեփոր ոգին հողմի-պղնձաշունչ ոգեկանչը արիական գրոհների:

Ն. Ա.-Շիրակը Հայաստան աշխարհի ամենամեղեդային, ամենապոետիկ անկյունն է՝ իր պատվանուն արվեստագետներով: Այդ դյուբանքն ինչպե՞ս է արտահայտվում բանաստեղծ Ռ. Եսայանի ստեղծագործություններում:

Ռ. Ե.-Շիրակը, հատկապես Գյումրին, հարուստ և առանձնահատուկ է իր բանաստեղծական տարաբնույթ նկարագրով: ՀԳՄ Շիրակի մասնաճյուղի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը, որն, ի դեպ, նաև իմ նոր գրքի «Հրեշտակի ինքնագիրը» բանաստեղծությունների և պոեմների ժողովածուի խմբագիրն է, ստեղծագործական աշխատասիրությամբ բավակահին կենսաթրթիռ ու աշխույժ է պահում գրական աուրան ու դաշտը: Այնպիսի զգացողություն ունեն, որ իմ կյանքի կարևորագույն գիրքը հիմա են գրում կամ պիտի գրեն (ստեղծագործական ինտուիցիայի տարածությունը դա է հուշում): Ավարտելով «Հրեշտակի ինքնագիրը», սկսել եմ գրել մի նոր գիրք՝ «Հոգու ավազան», որն ընդգրկելու է բանաստեղծությունների 10 շարք: Ավարտված և խմբագրված է առաջին «Լեռն անձրևի ուռկանի մեջ» շարքը, միաժամանակ աշխատում եմ երկրորդ և երրորդ «Ճակատագրի երկու ափերի միջև» և «Հոգու ավազան» շարքերն ամբողջացնելու ուղղությամբ:

Ն. Ա.-Շնորհակալություն, Ռոբերտ, մեր զրույցը կշարունակենք Արցախում: Մինչ տեսություն:

Ռ.Ե.-Առողջ եղեք, Նվարդ ջան: Ես էլ երախտագիտությունս արտահայտեմ երազից ծնված այս տողերով.

Երազում են մտնել քաղաքն արծաթ ու վեհ, գրկե՛լ, գրկե՛լ երազանքը ծյուղերով տնջի, ինձ մոտեցող օրհներգության զանգերով տարվել և միանալ հորձանքներին երազով վերջին:

Հարցազրույցը Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ 23.03.2022թ.




«ՄՈՒՍԱՆԵՐԻ» ԽԱՂԱՂ ԳՈՅԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ...

Մայիսի 13-ին ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի Արվեստագիտության և հունամիտար առարկաների ամբիոնի նախաձեռնությամբ՝ Հայոց լեզու և գրականություն առարկայի դասընթացի շրջանակներում (դասախոս՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարինե Մարտիրոսյան), բուհի առաջին կուրսի ուսանողները հյուրընկալվեցին Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքում: Հանդիպման նպատակը

մարզում ստեղծագործող արդի գրականություն արարողներից երկուսի՝ ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ Անդրանիկ Կարապետյանի և Շուշիից Գյումրիում բնակություն հաստատած Ռոբերտ Եսայանի հետ ծանոթանալն էր. նրանց ստեղծագործությունները նախապես ընթերցել և վերլուծել էին ուսանողները: Ջերմ ու անկաշկանդ մթնոլորտում ընթերցումներին հաջորդեց զրույցը գրական ընթացքի, ընդ-

հանրապես արվեստում ներշնչանքի ու «մուսաների» խաղաղ գոյակցության մասին: Ավարտին Արարատ Մկրտումյանի բանաստեղծությունների նորացված վերատպությամբ ժողովածուն ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքը նվիրեց Ակադեմիայի գրադարանին: Ի դեպ, գիրքը տալիս է նաև գրողի մասին ֆիլմը դիտելու հնարավորությունը QR կոդի միջոցով:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՕՐԵՐ՝ 1948 ԹՎԱԿԱՆ

ժողովածուն ներկայացնում է հեղինակի կյանքի պարած, ավելի ճիշտ, չապրած աքսորական մեկ տարին՝ 1948 թվականը:

Գրողին սահմանված 77 տարիների երկրային կյանքի ընթացքից դժվար է հաշվարկել, թե քանի օր է նա լիարժեք ապրել

կամ ապրել է արդյոք: Մանկությանը՝ համիդյան կոտորածներ:

Երիտասարդությանը՝ երիտթուրքերի ցեղասպանությունը: Կյանքի մնացած մասն էլ՝ բուլչակյան բանտ, աքսոր և հավածանք:

Չհարմարվող և ընդվզող, ըմբոստ մարդու ճակատագիր...

Գիրքն ընդգրկում է նրա հսկայածավալ օրագրության միայն մեկ թիվը՝ 1948-ը, երբ նա, հավածական խորհրդային կառավարությունից, իր պատիժն էր կրում Գեղարքունիքի Տորֆավանում (Ղանշու, Ղանլի):

«Խորհրդային օրեր. 1948 թվականը» «Չապրած օրեր» հատորյակի անմիջական շարունակությունն է:

1925 թվականից սկսած՝ մինչև կյանքի վերջը Լեռ Կամարը սերունդների համար ճշմարտացիորեն օրագրել է խորհրդային կյանքի դժնդակ օրերը: Օրագրության այդ մասը գրողն այդպես էլ վերնագրել է իր տետրերում՝ «Խորհրդային օրեր»: Օրեր, որոնք չէին ապրեցնում, այլ մեռցնում էին:

Այդ տարվա իր հոգեվիճակը. «Ինչպես որ պատերազմի ինվալիդը պառկելիս հանում է իր փայտե ոտը կամ թևը կամ մի այլ վերջավորություն՝ ազատվելով կապանքներից, այնպես էլ ես եմ քնելիս քանդում և անջատում ինձանից բոլոր՝ ինձ կյանքին միացնող թելերը: Թելեր, որոնք միայն անախորժություն են հաղորդում հոգուս: Իրիկուններն ինչքան հեշտությամբ են կտրատում այդ թելերը, առավտները նույնքան դժվարությամբ՝ կապում:

Հիմա, երբ ընդամենը յոթ կամ ութ ժամ քնելուս համար այսքան ուրախանում եմ, ձեզ եմ թողնում երևակայել, թե հավիտենական քուն մտնելիս որքան պիտի ցնծամ: Մի քուն, երբ պիտի արձակեմ կապերս՝ այլևս բնավ չմիացնելու համար...»:

Ամբողջական օրագիրը, որը հեղինակն սկսել է 1925թ., երգիծա-ողբերգական իրապատում է, որի գլխավոր հերոսը ինքն է և աշխարհի պատմության իրեն բաժին հասած ժամանակը:

Հեղինակը տարբեր տարբեր օրագրություններին առանձին անվանում է տվել՝ «Խորհրդային քաղաքացու օրագիրը», «Խորհրդային օրեր», «Չապրած օրեր», «Կարմիր օրեր», «Կարմիր ծիծաղ» և այլն:

Օրապատումից առայժմ տպագրվել են նախքան բռնադատվելը գրված

«Մահապուրծ օրագիր» (1925-35 թթ.), «Լուսաբաց» հրատարակչատուն, 2008

«Բանտիս օրագիրը» (1935-36թթ.), «Ամարաս» հրատարակչություն, 2010 բռնադատվելուց հետո գրված՝

«Կարմիր օրեր» (1953-1958 թթ.), «Նաիրի» հրատարակչություն, 2000

«Սոցիալիզմի Սահարա» (1959 թ.), ՀԳՄ հրատարակչություն, 2009

«Հալոցք» (1960 թ.), «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2013

«Չապրած օրեր» (1945-1957թթ.), «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2016

«Միայնակը» (1961 թ.), «Է-

դիթ Պրինտ» հրատարակչություն, 2018:

Դեռևս անտիպ են 1949-1952 և 1961-1965 թվականների օրագրությունները: Օրագրության այս հատվածում հեղինակն արդեն հիմնականում անցել է արևելահայերենի: Սրբագրված են միայն բառամիջում է-ով գրված արևմտահայերեն ձևերը, որոշ բառեր և տեղանուններ թողնված են հեղինակի ուղղագրությամբ: Լեռ Կամարի գրական ժառանգությունից՝ բացի օրագրությունից, անտիպ են մնում նաև բազմաթիվ ֆելիետոններ, նամակահին և պետական այրերին ուղղված բողոք-դիմումները: Ամիսների բացթողումը, ամսաթվերի անճշտությունը և կրկնությունը հեղինակին են: Շատ դեպքերում կարող են լինել պայմանական:

Վանուհի ԹՈՎԱՄԱՅԱՆ



Սամվել ՅՈՒՆԻՍՅԱՆ

ՉՄՈՒԱՑՎԱԾ ԲՍԱՆԵՐՈՐԳ ԳԱՐԸ, ԾԻԾԱԳԸ ԵՎ ԿՐԱԿՈՅԸ ՃԱԿԱՏԻՆ

Սեր կուրսողե՛ր՝ Հասմիկյանը, խոստացել էր ծանոթացնել Արտավազի Փելեշյանի հետ. «Գիտես, չէ՞, որ նա էլ է ծնունդով գյուղացի, նոր է վերադարձել Ֆրանսիայից, այնտեղ ինչ-որ կրթական հաստատությունում դասեր է տալիս»: Կինոյի տանը հանդիպեցինք մեծ ռեժիսորին: Նա Հասմիկյանին պատմեց իր եվրոպական պայմանագրերից: Կինոյից չխոսեցին: Նա ինչ-որ մեկի հետ էր պայմանավորված, պիտի գնար: Երբ արդեն Փելեշյանը մեքենա էր նստում, վարպետիս հետ լուսամուտից նրան էի հետևում: Ես այդ պահին հիշեցի, որ ինքս էլ տեղ ունեի գնալու: Հասմիկյանն ասում է, թե կինոսցենար է գրում՝ հերոսին իմ նախատիպով է ուրվագծել: Ինձնից ի՞նչ հերոս, մեր ժամանակներում հերոսի ուրիշ տիպած է պետք փնտրել: Ես ի՞նչ, ինքս էլ ինձնից գլուխ չեմ հանում՝ հը՞, ինձերցիայով ապրող զբոսը, որ ինքն էլ չգիտի ինչ գույնի կենդանի է. սպիտակ սև գուլերով, թե՛ սև սպիտակ զուլերով:

Ժամը 12-ը կլիներ, երբ հասա Ազգային գրադարան:

Մուտքի մոտից ինձ ձեռքով արեցին: Չկասկածեցի, որ Լուսն կարող է չլինել: Բայց քայլերս արագացնելուց հետո տեսա, որ Սոֆան էր, գրադարան էր եկել քննական առարկան պարապելու: Ասացի, որ մարդու եմ սպասում, եթե համբերի, միասին կմտնենք գրադարան: Երբ Սոֆան, ինչպես միշտ բարոյախրատական հունի մեջ ընկած, իմ անխելք սրտի քննադատությամբ էր զբաղված, նա երևաց: «Լուսն՞ն է, ի՞նչ է»: Ղե՛, իհարկե, չէր սխալվել: Լուսն մոռացել էր գրադարանի տունը վերցնել, կամ ի՞նչ իմանամ, մոռացել էր որ: Չմտանք ընթերցասրահ, Սոֆային հրաժեշտ տվեցինք ու գնացինք: Լուսն անմիջապես հարցրեց. «Ինչո՞ւ էիր ասել նրան, որ ինձ ես սպասում, թե՞ քեզ համար ավելի կարևոր է, որ ոչ մեկին չնեղացնես, հույսից չզրկես»: Ես ինքնաբերաբար մտաբերեցի. «Միայն թե սրտին ոչինչ մոտիկ չընդունել, որովհետև այն, ինչ ընդունես, կուզենաս ուժով պահել, իսկ ուժով ոչինչ պահել չի կարելի»: Նա մտածեց, թե աֆորիզմը ես հեղինակեցի. «Նորից Ռեմարկ եմ սկսել կարդալ, միտքը իրենն է: Հա, գիտե՛ս, Ռեմարկին և նրա գրչակից ընկերներին «Կորսված սերունդ» են անվանել: Ես մեր սերնդի համար մի ուրիշ բնորոշում եմ գտել՝ «Փլատակների սերունդ»: «Ինչո՞ւ»: «Ես ի՞նչ, խորհելու բան է»:

Նա առաջարկեց Ամերիկյան համալսարան գնալ. քույրն այնտեղ է սովորում, խնդրել էր, որ մեզ ծանոթացնի: Մետրոյի «Բադրամյան» կայարանի շարժասանդուղով բարձրանալիս Լուսն հարցրեց, թե ես ունեցե՞լ եմ մի աղջիկ, որին իսկապես սիրել եմ: Այդ հարցին ես սովորաբար ռոբոտի պես վարժ եմ պատասխանում. «Ունեցել եմ»: «Եվ ի՞նչ, նրան հիշո՞ւմ ես հիմա»: «Չէ՛». այս պատասխանն էլ է մեքենաբար ստացվում:

Երևի այստեսակ երկխոսություններին կարևորություն չեմ տալիս: Բայց իմ կարծ պատասխանից Լուսն երևի տխրելու համար դադար վերցրեց, հետո նվաճալու պես ասաց. «Ինչո՞ւ, ինչո՞ւ չես հիշում, ասելի, որ հիշում ես: Դժվար էր, ինչո՞ւ չասիր»: Դադար անց. «Եթե շա՛տ ես ուզում, կարող եմ ասել, բայց պե՛տք է, որ ստե՛մ»:

Լուսնի քույրը շատ զբաղված աղջիկ էր երևում, անընդհատ համալսարանի միջանցքում հանդիպած ինչ-որ մեկի հետ զրույցի էր բռնվում: Լուսն, թողնելով նրան իր անհետաձգելի զրույցների հետ, մոտեցավ լուսամուտին, հետո ինձ կանչեց:

Բարձրից հրաշալի էր երևանի համայնապատկերը: «Ի՞նչ ես կարծում, եթե ընկնեի այստեղից, ի՞նչ կլիներ»: Այդ պահին հիշեցի, թե ինչպես մի անգամ աչքիս առաջ շան ձագուկ էր ընկել երկրորդ հարկից: Լուսն շրջանցեց ինձ ու աստիճաններով վեր ելավ. «Է՛, Դավիթ, Դավիթ, ես ասում եմ ընկնեմ, իսկ դու՛ շան ձագը...»: Ճիշտ որ, շան ձագը որտեղի՞ց գլուխս մտավ: Բայց մի ուրիշ մտքով փորձեցի անտեղի հուշքողարկել. «Մոռացում. ահա որն է հավերժական ջահելության գաղտնիքը: Մենք ծերանում ենք մեր հիշողության պատճառով: Մենք շատ քիչ ենք մոռանում»: Գլխի ընկավ՝ «Էլի՞ Ռեմարկից էր»:

Նստեցինք երթուղային տաքսի: Երբ որ իջանք, Լուսն մյուս օրն իրենց տուն հրավիրեց: Մի նախապայմանով համաձայնեցի, որ մայրն ինձ հարցաքննության չպիտի ենթարկեր: Իհարկե, խոստացավ նա՛ ինձ կներկայացնի որպես կուրսողներուց, ինչպես որ կամ, ոչ մի սուտ: Հետո նա հետաքրքրվում էր, թե ինչպե՞ս եմ գյուղերում ընտանիքում վերաբերվում նորահարսին: Ես ծիծաղելի, չափազանցված օրինակներով

ներկայացրի, բայց դա նրա հետաքրքրությունը չբավարարեց. լուրջ փաստարկներ էին պետք: Ավելի կոնկրետ՝ ամոթխածորեն հարցրեց. «Իսկ եթե նորահարսը, դե ո՞նց ասեմ... օրիորդաց դասից չէ՞»: Զմծիծաղեցի ինչո՞ւ էր դա իրեն հետաքրքրում. «Չլինի՞՞ էդ դասին չպատկանելու խնդիր ունես»:

Նա նեղվեց, բայց համոզիչ ասաց, թե նման խնդիր չունի, ապա մտքերը հավաքելով՝ «Բայց ինչո՞ւ էդ հարցը տվիր... Նեղացա քեզնից»: Ես վիճակը հեշտ հարթեցի. «Համ էլ, իմացած լինես՝ ինձ համար էդ մեկը ոչ մի կարևորություն չունի: Դե՛, եթե դա մեղք համարվեր, աղջիկներն ինձ վաղուց պիտի քարկոծելով շանսատակ անեին»: Նրան այս անգամ էլ իմ համեմատությունը դուր չեկավ. «Մեկ շան ձագ, մեկ շանսատակ, ի՞նչ ես խեղճ շներից կպել»:

Կեսգիշերին արդեն ես ու Արմանը պետք է գնայինք հանրակացարան: Սեր երևանցի ընկերը Արմենն էլ էր հետներս: Նա հոգեբան է դառնալու, ուսանող է: Չգիտեմ՝ ինչ կարիք կա մի մասնագետ դառնալ, որի «հաճախորդի» բոլոր տվյալներին արդեն իսկ տիրապետում է: Գիտեմ, որ գրքերը նրա թուլությունն են, դրա համար կանչում են մեր սենյակում գիշերելու, համ էլ գիրք կկարդանք. «Երևի վաղուց ձեռքդ չես առել՝ «Երեք ընկերը»: Նա ծիծաղում է. «Դու էն անելոդ՞տը նկատի ունես, որ երկու ալկաշ որոշում են կոնսպիրացիայի համար «օղի» բառն իրենց խոսակցականից հանել ու փոխարինել «գիրք» բառով, ու այնպես է ստացվում, որ «գիրք կարդալը» դառնում է իրենց սիրած զբաղմունքը»: «Շուն ես, հա՛, Արմեն, բայց իմ առաջարկը համ ուղղակի, համ էլ՝ անուղղակի, կարդալուն էր վերաբերում»:

Սենյակում Արմանենց գյուղից ուղարկած տանձի օղուց

դեռ մնացել էր: Մենք քիչ-քիչ էինք խմում, էնքան որ Ռեմարկի «Երեք ընկերների» տոնուտով գնայինք: Արմանը հոգնած էր, մի բաժակ խմեց ու քնեց: Ես պառկած կարդում էի վեպը ու մեկ-մեկ ակնդետ նայում շշին. պարզվում էր, որ էնքան էլ քիչ չէր ստացվում մեր խմածը, եթե հաշվի առնեի «բարձր գրադուսը»: Արմենին հարցնում եմ՝ հիշո՞ւմ է երեք ընկերներից մեկի խոսքը, «Եթե՞՞ քսաներորդ դարի վրա չծիծաղես, ուրեմն ճակատիդ պիտի կրակես, բայց նրա վրա էլ երկար ծիծաղել չի լինի: Ավելի շուտ՝ վշտից կոռնաս»:

Պարկինսոնի հիվանդությունը տկարացրել է, Ռոբը հավատարիմ շան պես նրա կողքից չի հեռանում, միայն արանքարանք, աչքից հեռու խմում է: Պատը նրանից հայելի է ուզում, որպեսզի վերջին շնչում նրա աչքին հյուժված ու տգեղ չերևա...:

Դու ինչո՞ւ էդքան շուտ Պատին հասցրիր մահվան դուռը,–տխուր հանդիմանում է Արմենը: Մենք Պատի «մահվան դռնից» ետ ենք գնում: Օրը չէր բացվում, ու շշում էլ դեռ օղի էր մնում: Ես հեկեկալով էի կարդում, Արմենը արտասվում էր: Ռոբի մեծ սերը դարձյալ չէր կարողանում Պատին փրկել մահից: «Ես ոչինչ չէի կարողանում անել,– պատմում էր Ռոբը:– Միայն այսպես ամայացած նստել ու նայել նրան: Հետո վրա հասավ առավոտը, ու նա չկար»: Լուսնի դալուկ շողեր հայտնվեցին մեր սենյակում: «Դավ՛, էնպես ես կարդում, ոնց որ քո կյանքը պատմես, շատ անկեղծ է ստացվում, արի վերջին բաժակն էլ «բարի լույսի» կենացը խմենք»:

Արմանը զարթնելու նշաններ ցույց տվեց: Հետո աչքերը տրորելով շշմած ասաց. «Վա՛, ձեր տունը շինվի, հլը խմո՞ւմ եք»:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ Փաստահիմա-ԱՄՆ

ԿԱՆԱԾ ԳԱՐՈՒՄ

Հոգիս իր հանդիպած գարնան, Ծաղիկներ քաղեց անհամար, Վարդերը գգուեց. համբուրեց. Որպեսզի ծնին երազներս անհամար:

Հոգիս իր հանդիպած գարնան, Մտքես չոր ու ամայի, Ջերմութիւն բաշխեց բոլորին, Որպեսզի ապրին ու բազմանան:

Ապա հոգիս իր հանդիպած գարնան, Հաւաքեց իմ սերերը կարօտագին, Ու յոյս խառնելով երազին, Յանձնեց գիշերուան կապոյտին:

Ու անկէ ետք, հոգիս իր հանդիպած գարնան, Մէկ առ մէկ գատեց անձկագին,

Ու պահեց այն մէկը միայն, Որ միշտ յոյս բերած էր իր երազին:

Ու այն օրէն ի վեր, հոգիս իր հանդիպած գարնան, Մերժեց բոլոր գարունները անհամար, Ու պահեց իբրև գարդ՝ կանաչ գարունը միայն, Դո՛ւն, բոլոր գարուններուս միակ գարունը անմահ:

ԳՐԻԳՈՐ ՊԸԼՏԵԱՆ Փարիզ-Փրանսա

ՆՈՅՆԸ

աւազի բլուրներէն ծուխեր կու գան ճերմակ կը ծածկեն հետքերը բլուրներու տեղաշարժ օ ջնջոււմը տեղաշարժին երբեմն քուրջեր կը յայտնուին աղի մազի խոպոպներ եւ դեռ

խաւերը քաղաքի աղբին մեռել մը որ կը մնայ հոն անթաղ անմեխելի ու զմռսուած կը դիտես պիտի չկրնաս նայիլ անոր դէմքին թերեւս նմանիք իրարու թերեւս անկրելին օ վայր բերնին մէջ ձայնին ահաւորութեան ուր արեւը խրեցաւ ծագումին օ վայր սկզբնական եւ ան-յօղելի բայց չիշել ոչինչ որ ըլլար յիշելի եղանք մոռացումը աշխարհին թերեւս նոյն բլուրները կու գան նախկին անխօս աւազներն

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՅԵԱՆ Նիկոսիա-Կիպրոս

ԵՂԻՑԻ ԼՈՅՍ

Թող փարատի թանձր մեզը. Ցաւի դաւի սեւ մրուրը. խարդաւանքի մառախուղը. Պիղծ կեղծիքի գորշ մշուշը Դայ աշխարհէն բազմադարեան, Ուր մշակը Բանին կենաց Արարեր է Լոյսը անափ, Որպէս փարոս, լոյս-ուղեցոյց Մտքի, սրտի, խիղճի, հոգուոյն, Չայն գետեղեր Մասսեաց գլխուն Որպէս պսակ մը անթառամ, Յաւերժական, յաւերժափայլ: ԵՂԻՑԻ ԼՈՅՍ, Թող ծագի նոր արշալոյսը Լուսա հեղեղ, վարդահեղեղ ու, Թող ողողէ երկինքները, Երկինքները հայրենական, Խուժժ բոլոր սիրտերէն ներս Որպէս ճաճանջ բարուոյն, սիրոյն, Տեղ չթողու մութին ահեղ Չարեաց աղբիւր սուտին քսու եւ խաւարին հազարանուն:

ԵՂԻՑԻ ԼՈՅՍ,

Թող օժէ ան հայուն հոգին Որ գերթ արծիւ է խոյացեր Մասսեաց սարի գագաթն ի վեր Տառապանքի խոր վիհերէն, Անդնդախոր բիւր չարքերէն Սըլացեր է երկինքն ի վեր, Սաւառներ է միշտ երկնահաս Բարձունքներուն տենդով արբշիռ Լուսահմայ, Անափ, անծիր, անեզրական, Ու շող առ շող, ճաճանջ-ճաճանջ Վանէ մութը, չարն ու կեղծը, Նենգի, ոխի թոյնն ու ժախրը, Սիրտէ ի սիրտ քահալամէ Սիրոյ մի նոր վառ արեգակ, Թող գրկէ հայաշխարհը ողջ Շողերով իր արեւաթով, Ծաղիկ-ծաղիկ սիրտերն բացուին, Բոյր-թոյրերով արեւածին, Նոր ցնծութեամբ ողջագորուին Վառ շողերովն այգաբացի: ԵՂԻՑԻ ԼՈՅՍ...



Մարինա ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱՄԱԿ ԵՐԿՆՔԻՑ

Պատուհանի փեղկերը զգուշ բաց, ներս են ծորում ու կլանում քեզ ամբողջովին, Ճկված է եւթյունդ իմ կամարով մեկ. ես տեսել եմ քեզ՝ աղոթելիս... ինձ արտացոլում են ջրերը հողի ակնափոսերում. դու վեր ես նայում՝ աղոթելիս... Գիտեմ՝ սերդ է մշտամնա, քոնն է յոթերորդը անհիմանալի, երբ արյունը մակընթացող զարկվում է ափերի եւ հետ քաշվում դեպի ...Սիրտ: Լվալով ավազը մշտակայության ո՞ւր ես հասնելու մի օր, պատասխան պետք չէ ինձ, միայն առաքատով բառի՝ լույսի արագության ճամփով նավակդ իջեցրու իմ ջրերին ու սիրի...

Ծաղկաթեյ լցրու հոգնության բաժակը, նստիր գարնան գոգին՝ արևը յոթ սարի հետև ճանապարհելու... Գրեթէնը կանաչ բառերով թող լույս աշխարհի գա մատներինդ, և լինեն այնտեղ հիրիկներ կապո՛ւյտ-կապո՛ւյտ,

խատուտիկներ դեղի՛ն-դեղի՛ն: Թեյի գոլորշին ապակու վրա շոյիր այնպես, որ սակուրան դուրս գա շրջանակից, ու բաց փեղկերը հորիզոնի, փոփո բանաստեղծությունը արահետին, որով մեղունների պես անցնելու են օրերը՝ փոշուտ տոտիկներով առէջներից տանելով կակաչներ դեղի՛ն-դեղի՛ն, հիրիկներ ու խատուտիկ:

Վերևում մի հավք թևով սրբում է երկինքը, հանկարծ հասկանում են, որ անկշռությունը հաղթում է վախերին, էլ չեն փակում աչքերս հոգեծովի մակարոնակից մի քանի պարսեկ վեր սավառնելիս, այնտեղ չի ցավում անցյալում մնացած ոչ մի սպի... այնտեղից տեսնում են իմ այգին, ուր խաղաղության հողն է ամենաբերրի, և ծառից կապած ճոճանակին շարունակվում են որդուս աչքերում... վարդենիներ են ցանկապատել իմ կանաչ աշխարհը, և բույրը խտտում է ծաղկող օրերի ընչացքը. հիշողության սառը մի հոսանք վերապրում են ժպիտով, որովհետև հեշտ չէր, հեշտ չէր մի օր կոտրել ակնոցը և հավատալ, որ ինչ էլ լինի՝ չեմ կորցնի տեսողությունը գույնի...

ԿՅԱՆՔ Անխոստում նվաճված ոսկե սարերից հայտնության հրաշքով կպեղեն մի օր միմբերի կրակուն թրծված հեքիաթի բանալի, Չափող ճանաչի՛ր, կասեն, երազողներին այրում են

պատրանքների խարույկում, բայց ես չեմ հավաքի ծաղիկներս ու չեմ խռովի լույսից: Մարջանե մթում մի սիրուն ջազե ճարճատյունով կբացվեն ամենամեծակ իմ լեռան հողե դռները, և թեկուզ վերջին ճախրանքում ամենաբաց թևերով արծովի՝ արդարության ջրերին կփշրվի անհնազանդ իմ ոգին: Բայց ես կմնամ հար ազատ ու չեմ խռովի քեզմից:

Սիրում եմ քեզ, երկինք, հիացման արցունքս չեն ներում, բայց ես չեմ ամաչում աշխարհից, ու ոչ մի անձրևող օր չի բաժանի մեզ, քանի դեռ երկրին նետում ես ծիածանի փունջը, ու քամվում է նեկտարը լույսի աչքիս մեջ այնպե՛ս նուրբ: Մղոնները կծկել, հյուսում են կամրջակ, Ու գալիս են, գալիս՝ կամարներն անցնելու: Լարախաղաց եմ հիմա, ու սերն իմ՝ հենման կետ. ծիծառներն աղմուկով իմ քայլերն են հաշվում, ու օդը լցվում է արարման սոնատով, երբ ծաղկե նավակ են իջեցնում կապույտիդ՝ պոկելով զգուշ թերթիկը յոթերորդ. Սիրում եմ քեզ, երկինք...

ՊԵՏՐԻԿՈՐ

Ուտերը միշտ հողն զգալու կարիք ունեն: Ոչ մի կոշիկ ձգողությանը չի հաղթի: Լիցքերն անտես կաղմկեն մազա-նոթներում՝ Կյանքը պիտի սիրել Առաջին ու վերջին սիրով, թեկուզ անպատասխան: Բոլոր ջրերը ամպ դարձած դատարկվում են: Ամեն ինչ փոխակերպվում է ինչ-

որ բանի եւ վերադառնում է: Հիշողությունը շան հոտառու-յուն ունի. Ոչինչ, ոչինչ չի կորցնի ճամփին: Եվ հատկապես անձրևներից հետո օդը ընչացքից կբռնի, Որ չնոռանանք շղթայի մեր անփոփոխ տեղում Կյանքը սիրել առանց համեմատելու, անպայման: Որովհետև միայն մարդն է կոշիկ հորինել ու գուլպա, բայց վստահ, որ բոքիկ քայլելն է ճիշտ: Եվ ժամանակը երկար-կարճ սլաքների միջև տեղավորած՝ Հապճեպ առաջ է ընկնում ու Գնում գնում գնում՝ նվիրյալի արվեստով մերկ՝ հող դառնալու...

Եվ դաշտերը կանչեցին՝ արի, հավաքիր նեկտարը կյանքի, տեղավորիր թթվածինը բառերի մեջ, և երկինքը փսփսաց՝ արի, քաղիր կապույտ հիրիկները դեղնառնեջ ծիրի, հորիզոնական դասավորիր սպիտակին անլուսանցք տիեզերքը, սեղանիս հենված մի շող հեղեց արևի թանաքը մատներիս, և սիրտը, որպես երկնագույն ալկոհ, կանչեց ափերը անապակ ջրերի ու անտոնահետք մենության մարգագետիններով տարավ ինձ... ես գրեցի սիրո մասին:

աչքերս տխուր չեն, չէ, ես մի կյանք անդին արդեն գիտեի՝ բնությունն է իմ հավատարիմը, որ երբեք չի մոռանում իր ծաղիկներին ջրելու արվեստը ազնիվ, ծիծեռնակները կանչում են, այս անձրևից հետո կանաչի գրկում կուչ գալու ժամանակն է:

ՆԱՄԱԿ ՀՈՂԻՑ

Դանդաղ պատռելով ծրարը գիշերվա՝ հայելուն պահիր, հասցրու կարդալ, որովհետև իմ թանաքը հիշողություն է՝ թափանցիկ... մինչ կհաշվես ապրած-գտած-բացթողածը, օրերը սպառած անվերադարձ, իրականության գրպանները թափ տալով՝ կշտապես... մի տեղ, որ պիտի տուն լիներ, կիրակի՝ մարդաշատ հատկապես, շտապում եմ սփոփել քեզ, որ թաղար ես՝ ինձնով լի, հեռու կանգնիր քամոտ պատուհանից, ես ամեն ինչ գիտեմ, և չկեղծելուց է, որ իմ մեջ աճում են քո սերմերը, և հենց այնպես ներում եմ քեզ, երբ փաթաթվում ես առավոտի ձեռագործ շալով ու մաշկիցդ գլորվող ցողը թողնում ինձ... ես առանց քեզ՝ անջուր փոշի, հավատարիմ եմ քեզ՝ առանց պայմանների, դու՛ միշտ ինձ վերադարձող գոլորշի... ընդունում եմ քեզ, ինչպես կաս, պատասխան չգրես... միայն վաղը մի առավոտ ավելի՝ զգիր ուսերիդ ու սահեցրու զգայարաններդ ի վեր մետաքսը կյանքի:

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ: